# ՀՀ բանկային համակարգի 2011 թ-ի երկրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Բանկային համակարգի գործունեության ընթացիկ տարվա առաջին և երկրորդ եռամսյակների արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգն ապրում է կայուն առաջընթաց: 2011 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Բնականոն ընթացք է ստացել ֆիզիկական անձանց վարկավորման գործընթացը, աճել մատուցվող ծառայությունների ծավալը, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների ծավալը, ինչպես նաև նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ ապահովվել է մաքուր շահույթի զգալի աճ:

**Ընդհանուր ակտիվներ**

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2011 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 5.7 %-ով կամ 95.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 1,763.3 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվները նվազել էին 3.4 %-ով կամ 47.6 մլրդ դրամով: Համեմատության համար նաև նշենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 6.4 %-ով կամ 100.2 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ այս տարվա առաջին կիսամյակում ակտիվները ավելացել են 12.5 %-ով կամ 195.8 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 1.8 %-ի կամ 24.5 մլրդ դրամի փոխարեն:

**Վարկային ներդրումներ**

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 9.0 %-ով կամ 96.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 7.5 %-ով կամ 9.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,179.1 և 115.3 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 8.1 %-ով կամ 81.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 4.2 %-ով կամ 5.0 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 1.0 %-ով կամ 8.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.1 %-ով կամ 0.1 մլրդ դրամով: 2011 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 66.9 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 63.9 %-ը կամ 753.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշն 2-րդ եռամսյակի ընթացքում աճել է 9.5 %-ով կամ 65.1 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 2.1 %-ի կամ 10.9 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 12.7 %-ով կամ 77.7 մլրդ դրամով:

2011 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2011 թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում աճել են 7.5 %-ով կամ 23.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 342.0 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 0.5 % կամ 1.6 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ անցած տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը

աճել էր 0.7 %-ով կամ 2.0 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 29.0 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 18.7 %-ը կամ 220.9 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 8.3 %-ը կամ 97.9 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 3.7 %-ով կամ 7.9 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 4.1 %-ով կամ մոտ 3.8 մլրդ դրամով, ընդ որում՝ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 8.5 % կամ 16.6 մլրդ դրամ և 3.2 % կամ 2.9 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված աճերի դինամիկան հիմք է տալիս ակնկալելու, որ առաջիկայում ևս բանկային համակարգում կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ:




**Պարտավորություններ**

2011 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,410.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 32.3 %-ով կամ 344.6 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 6.9 %-ով կամ 91.6 մլրդ դրամով, իսկ այս տարվա առաջին եռամսյակում՝ 6.6 %-ով կամ 82.1 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 7.9 %-ով կամ 34.4 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 0.8 %-ով կամ 3.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 470.4 և 387.7 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 6.4 % կամ 21.3 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 8.9 % կամ մոտ 15.3 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերը նշված ցուցանիշների աճ էր գրանցվել նաև ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 6.9 %-ով կամ 28.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 9.4 %-ով կամ 28.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 4.1 %-ով կամ 15.0 մլրդ դրամով, որում ժամկետային ավանդները նվազել էին 3.6 %-ով կամ 6.5 մլրդ դրամով: Յամեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդները նվազել էին 4.3 %-ով կամ 15.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 5.0 %-ով կամ 13.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 12.0 %-ով կամ 47.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 9.1 %-ով կամ 16.8 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 60.8 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2011 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան



## Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան




**Ընդհանուր կապիտալ**

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 1.2 %-ով կամ 4.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 352.5 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը առաջին եռամսյակում ավելացել է 5.5 %-ով կամ 18.1 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ավելացել էր 2.8 %-ով կամ 8.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը հաշվետու եռամսյակում նվազել է 2.9 %-ով կամ 3.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 113.6 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 32.2 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշը աճել էր 10.4 %-ով կամ 9.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 7.3 %-ով կամ մոտ 15.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 226.4 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 64.2 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ էր գրանցվել նաև նախորդ տարվա երկրորդ եռամսյակում, և այն կազմել է 1.3 % կամ 2.4 մլրդ դրամ:

## Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



**Եկամուտներ եվ ծախսեր**

Ընթացիկ տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 61.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 47.6 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա 2-րդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 50.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 40.8 մլրդ դրամ: Յարկ է նշել, որ հաշվետու եռամսյակում առաջին եռամսյակի համեմատ համակարգում ապահովվել է 2.4 %-ի կամ 1.44 մլրդ դրամի չափով ավել եկամուտ և կատարվել 0.1 %-ի կամ 0.03 մլրդ դրամի չափով ավել ծախս:

**Շահույթ**

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 10.74 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2010 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին գերազանցում է 2.54 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա առաջին եռամսյակում համակարգում ապահովվել էր 10.95 մլրդ դրամի մաքուր շահույթ:

**Ամփոփ ցուցանիշներ**

2011 թ.-ի երկրորդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 6.35 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.24 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 0.97 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.11 տոկոսային կետով:

ՅՅ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



## 2011-ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի, դրանց աճը/նվազումն երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

| Հ/Հ | Բանկերի անվանումը | Ընդհանուր ակտիվները | | | | | Ընդհանուր պարտավորությունները | | | | | Ընդհանուր կապիտալը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | աճ/ նվազ (%) | Գրա-ված տեղը համա կարգ | այդ թվում | | Ընդամենը | աճ/ նվազ (%) | Գրա-ված տեղը համա կարգ | այդ թվում | | Ընդամենը | աճ/ նվազ (%) | Գրավ- ված տեղը համա կարգ | այդ թվում | | | |
| | | | | | Վարկ. ներդր- ումները | աճ/ նվազ (%) | | | | Ֆիզ.անձ ժամկ. ավանդ | աճ/ նվազ (%) | | | | Կանոն. կապի- տալը | աճ/ նվազ (%) | Կուտ. շահույթ /վնաս | Չբաշ. շահույթ II-եռ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 1 | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 192679,0 | 13,5 | 1 | 133006,4 | 11,1 | 150566,3 | 16,3 | 1 | 28176,8 | 4,1 | 42112,7 | 4,2 | 1 | 30000,0 | 105,9 | 3414,8 | 1822,4 |
| 2 | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ. | 155157,2 | 3,7 | 3 | 104718,9 | 11,6 | 127983,9 | 4,0 | 3 | 35075,5 | -5,4 | 27173,3 | 2,1 | 5 | 10439,0 | 0,0 | 15764,5 | 1134,0 |
| 3 | Արդշինինվեստբանկ | 128292,2 | -0,1 | 6 | 84380,7 | 7,0 | 97183,1 | -1,3 | 6 | 31902,3 | 5,6 | 31109,1 | 3,7 | 3 | 15513,6 | 0,0 | 11625,6 | 1036,8 |
| 4 | ՎՏԲ Հայաստան Բանկ | 151921,9 | 10,6 | 4 | 108853,1 | 9,4 | 123280,3 | 15,8 | 5 | 32691,8 | 10,6 | 28641,6 | -7,1 | 4 | 13906,2 | 0,0 | 10773,0 | 1305,8 |
| 5 | Կոնվերս Բանկ | 81283,3 | -7,9 | 8 | 47504,7 | 6,3 | 64549,7 | -9,8 | 9 | 17568,5 | 4,8 | 16733,6 | -0,1 | 8 | 4923,3 | 0,0 | 7675,6 | 39,6 |
| 6 | Յունիբանկ | 112859,1 | 1,0 | 7 | 74784,6 | -2,2 | 96564,6 | 0,6 | 7 | 47351,6 | 1,6 | 16294,5 | 3,7 | 9 | 11400,7 | 0,0 | 5017,0 | 491,4 |
| 7 | Հայէկոնոմբանկ | 59766,1 | 21,6 | 14 | 33284,3 | 7,8 | 50801,8 | 26,5 | 13 | 9190,0 | 12,3 | 8964,4 | -0,3 | 17 | 2333,3 | 0,0 | 1136,6 | 121,0 |
| 8 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ | 177440,3 | 10,5 | 2 | 128917,0 | 15,5 | 145097,2 | 13,5 | 2 | 31250,0 | 7,8 | 32343,1 | -1,1 | 2 | 25477,3 | 0,0 | 6764,4 | 901,5 |
| 9 | Ինեկոբանկ | 68217,7 | 10,2 | 11 | 46135,0 | 5,7 | 54682,6 | 12,4 | 11 | 11856,9 | 5,8 | 13535,2 | 2,1 | 12 | 4431,2 | 0,0 | 6260,4 | 735,2 |
| 10 | Հայբիզնեսբանկ | 143687,2 | 9,3 | 5 | 97189,4 | 7,6 | 124987,8 | 10,7 | 4 | 35008,0 | 11,4 | 18699,4 | 0,4 | 6 | 13450,0 | 0,0 | 4813,7 | 356,2 |
| 11 | Անելիք Բանկ | 63624,2 | 1,1 | 12 | 35808,6 | -1,2 | 47737,7 | 1,4 | 14 | 14240,2 | 10,2 | 15886,5 | 0,4 | 10 | 14300,0 | 0,0 | 1668,8 | 32,3 |
| 12 | Առէկսիմբանկ | 80498,3 | -0,3 | 9 | 63242,5 | 13,3 | 65405,4 | -0,4 | 8 | 11596,3 | 12,2 | 15092,9 | 0,1 | 11 | 12347,3 | 0,0 | 2490,8 | 217,3 |
| 13 | Արցախբանկ | 62025,6 | 7,5 | 13 | 41743,0 | 10,6 | 52452,0 | 8,8 | 12 | 8234,8 | 7,3 | 9573,5 | 0,8 | 16 | 6561,2 | 0,0 | 2246,4 | 469,2 |
| 14 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ | 68367,1 | -2,1 | 10 | 34536,8 | 11,0 | 57237,0 | -3,1 | 10 | 11141,1 | 8,8 | 11130,1 | 3,4 | 13 | 7148,0 | 0,0 | 3503,6 | 596,4 |
| 15 | ԱրմՍվիսԲանկ | 38397,9 | 6,8 | 16 | 19387,6 | 28,0 | 28357,1 | 6,7 | 16 | 2680,9 | 1,0 | 10040,8 | 7,3 | 14 | 7002,0 | 0,0 | 1493,6 | 427,3 |
| 16 | Զարգ. Հայկական Բանկ | 31239,2 | 22,1 | 19 | 19691,4 | 26,8 | 23778,0 | 29,6 | 18 | 9956,2 | 32,9 | 7461,2 | 3,1 | 19 | 4556,7 | 0,0 | 2508,2 | 226,0 |
| 17 | Պրոմեթեյ Բանկ | 33416,5 | 3,8 | 18 | 21232,4 | 23,5 | 15294,5 | 6,3 | 20 | 2349,9 | 15,2 | 18122,0 | 1,8 | 7 | 14400,0 | 0,0 | 3610,7 | 300,1 |
| 18 | Բիբլոս Բանկ Հայաստան | 34922,1 | 14,7 | 17 | 27978,1 | 32,1 | 26167,8 | 20,0 | 17 | 6623,5 | 10,6 | 8754,3 | 1,2 | 18 | 8382,2 | 0,0 | 351,9 | 107,7 |
| 19 | ԲՏԱ Բանկ | 9052,0 | 6,7 | 21 | 4340,8 | -4,6 | 3602,0 | 12,1 | 21 | 1011,8 | -1,1 | 5450,0 | 3,3 | 21 | 6520,0 | 0,0 | -1109,5 | 171,5 |
| 20 | ՊրոԿրեդիտ Բանկ | 26931,6 | 7,5 | 20 | 20874,3 | 6,9 | 21345,5 | 10,3 | 19 | 6283,3 | 15,9 | 5586,1 | -2,0 | 20 | 6490,0 | 0,0 | -903,9 | -110,8 |
| 21 | Մելլաթ Բանկ | 43555,1 | -13,8 | 15 | 31460,4 | -18,7 | 33808,2 | -17,8 | 15 | 46,1 | -0,2 | 9746,9 | 3,9 | 15 | 6850,0 | 0,0 | 2777,0 | 361,9 |
| | Ընդամենը | 1763333,6 | 5,7 | | 1179070,0 | 9,0 | 1410882,5 | 6,9 | | 354235,5 | 6,4 | 352451,2 | 1,2 | | 226432,0 | 7,3 | 91883,2 | 10742,8 |